

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ. Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), *Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 428 էջ:*

Շուրջ երեսուն տարի է, ինչ Ս. Վարդանյանն ամենայն պատասխանատվությամբ ու սիրով զբաղվում է համշենահայերի, այդ թվում՝ կրոնափոխ համշենահայերի լեզվի, պատմության, հոգևոր ու նյութական մշակույթի ուսումնասիրությամբ: Այդ հարցերին նվիրված նրա հոդվածները հայերեն և այլ լեզուներով տպագրվել են մամուլի էջերում, ընթերցվել ու ներկայացվել գիտաժողովներում:

Տարիների ընթացքում կատարած հետազոտական ու հավաքական աշխատանքների մի մասն այժմ ամփոփված է մի գրքում, որը բացառիկ արժեք ու նշանակություն ունի հայագիտության, մասնավորապես՝ հայ ազգային ինքնության սահմանների ճշտման ու որոշման տեսանկյունից: Հայ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով երկրագնդի տարբեր ծագերում ապրում են անզլախոս, ֆրանսախոս, իսպանախոս, ռուսախոս, վրացախոս, թուրքախոս, արաբախոս, քրդախոս և այլախոս հայեր, որոնք տարբեր են նաև դավանանքով ու կրոնով՝ ուղղափառ, կաթոլիկ, բողոքական, մահմեդական և այլն, և այդ հայերի գոյությունը կասկածի ենթակա չէ: Եվ այսօր անհրաժեշտություն է նրանց միավորել հայ ազգային միասնության գաղափարի շուրջը:

Ս. Վարդանյանի հերթական աշխատությունը նվիրված է բռնի մահմեդականացված համշենահայերի շուրջ երեքհարյուրամյա պատմությանը, լեզվին, բանահյուսությանն ու ժողովրդական երգարվեստին:

Իրենց հրատարակած գրքերում կրոնափոխ համշենահայերի վերաբերյալ առաջին տեղեկությունները հաղորդում են

Մխիթարյանները՝ Ղ. Բնճիճյանը՝ և Ս. Բժշկյանը¹: Այնուհետև նրանց անդրադառնում է Ենայի և Բեռլինի համալսարանների պրոֆեսոր Կարլ Կոխը²:

Երբ XIX դարի հայ մամուլում հայկական հասարակական շրջանակները վիճում էին կաթոլիկ և բողոքական հայերի ազգային ինքնության խնդրի շուրջ, մեծանուն վիպասան Բաֆֆին «Մշակում» այդ կապակցությամբ գրում է. «Երկրագնդի վրա քաղաքակիրթ և թե վայրենի ազգերի մեջ չկա և չի եղել մի ազգություն, որ մեկ եկեղեցու պատկաներ... Մենք մեկ ազգի որդիներ ենք, մենք միևնույն ընտանիքի գավակներն ենք: Կաթոլիկությունը, բողոքականությունը և մինչև անգամ մահմեդականությունը չեն գրկում հային հայ լինելուց...»³: Բաֆֆու կարծիքը միանգամայն արդարացի և ընդունելի է նաև այսօր:

Ինչ վերաբերում է կրոնափոխ հայերի ինքնանվանմանը՝ հովշենցի, համշենցի (հեմշի, խեմշի), որը կրում են մինչև հիմա ինչպես Թուրքիայում ապրողները, այնպես էլ Միջին Ասիայում ու Հյուսիսային Կովկասում վերահաստատվածները, ապա պետք է որոշակիորեն ասել, որ այդ ինքնանվանումն օգնել է մահմեդականությունը բռնի ուժով ընդունածներին պահպանել իրենց՝ ազգային հալածանք-

¹ Հ ա յ ը Ղ ո լ կ ա ս վ ը դ. Ի ն ճ ի ճ ե ա ն. Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 396:

² Մ ի ն ս ս Վ ա ը դ ա պ ե տ Բ ժ շ կ ե ա ն. Պատմություն Պոնտոսի, որ է Սեա ծով, Վենետիկ, 1819, էջ 97:

³ D r. K a r l K o c h. Wanderungen im Oriente, II, Reise im Pontischen Gebirge und Türkischen Armenien, Weimar, 1846, p. 1-40.

⁴ Բ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 327, 332:

ներից ու բռնություններից: Կրոնափոխ հայր հստակ ու որոշակի պատկերացում ունի իր ազգային պատկանելության վերաբերյալ: Այդ կապակցությամբ մի հատկանշական երկխոսություն է ներկայացնում գրքի հեղինակը՝ Ս. Վարդանյանը: 1987 թ. Ղրղըզստանի Բեգաբադ բնակավայրում մոլլային ուղղված այն հարցին, թե ո՞վ է ասում, որ իրենք՝ համշենցիները, հայ են, մոլլան պատասխանում է. «Լիզու գասս, վո վ ասոդ ա, էրմենջա խաբրի գուք անա, անոցմա թառցուձիք այ, ալ ասուշ բիդի թա» («Լեզուս է ասում, ո՞վ պիտի ասի, եթե հայերեն ենք խոսում, նրանցից էլ կրոնափոխվել ենք, էլ ասել պե՞տք է») (էջ 181):

Գրքի էջերում տրամաբանական հաջորդականությամբ, հակիրճ շարադրված է Պոնտոսի ավերին հայերի հաստատվելու պատմությունը: Ավելի մանրամասն է տրված «Կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրության պատմությունից» բաժինը, որում ներկայացված են համշենահայերի պատմությամբ և մշակույթով զբաղվող գրեթե բոլոր հեղինակները: Այն արժեքավոր է նաև մատենագիտական տեսակետից:

Գրքի հաջորդ բաժինը նվիրված է լեզվին՝ «Համշենի բարբառի Խոփայի խոսվածքն ըստ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի»: Ծավալուն է ներկայացված ժողովրդական բանահյուսությունը՝ հեքիաթներ, գրույցներ, երգեր, մանիներ՝ խաղիկներ:

Գիրքն ունի Հավելված, որում Պոդոս վրդ. Մեհերյանի Վենետիկի Մխիթարյանների ձեռագրատանը պահվող հուշագրությունից տպագրված են որոշ հատվածներ, որոնցում նա պատմում է 1776 թ. Համշենում և Ճորոխի ավազանում իրեն հանդիպած մահմեդական հայերի մասին: Մա, թերևս, կրոնափոխ համշենահայերի մասին ամենահին գրավոր աղբյուրն է:

Ս. Վարդանյանն առաջին անգամ ըստ ամենայնի գնահատում է Պ. Մեհերյանի հուշագրությունը, կատարում որոշ լրացումներ ու ծանոթագրություններ, որոնք կարևորություն ունեն ինչպես մահմեդականացած, այնպես էլ Խոտորչորի կաթոլիկ հայերի պատմության համար: Բոլոր դեպ-

քերում հեղինակի էլակետը նույնն է՝ քրիստոնյա թե մահմեդական, հայր հայ է:

Ս. Վարդանյանի աշխատության ակնառու արժանիքներից է բանահյուսությանը նվիրված բաժինը: Նախ նշենք, որ նյութերի մեծ մասը գրի է առել ինքը՝ հեղինակը, իր շրջագայությունների ընթացքում: Թե որքան հոգեմաշ ու դժվար աշխատանք է բանահյուսական նյութ հայտնաբերելն ու գրանցելը, դա միայն բանահավաքներին է հայտնի: Ներկայացված ստեղծագործություններն այսօրվա գիտական պահանջներին համապատասխան ծանոթագրված են, տեղեկություններ են տրված բանասացի, գրառման տեղի, ժամանակի վերաբերյալ: Երգերին կցված են գրական թարգմանությունները: Հատկանշական է, որ երգերն ու մանիները նոտագրված են:

Բանահյուսական ստեղծագործությունների քննությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց զուգահեռ տարբերակներն ունեն հայոց աշխարհի պատմաազգագրական մի շարք շրջանների բանահյուսական կենցաղում:

Գրքում տեղ գտած «Օգե» (էջ 195) հեքիաթը Արցախ-Մյունիք շրջանից հայտնի երախտամոռ օձի հետ առնչվող սյուժեն է, ըստ որի օձը փորձում է խայթել իր կյանքը փրկած մարդուն⁵:

«Արդէլէցիք՝ ավջի» գրույցը (էջ 187) լայն կենցաղավարում ունի ազգագրական մի շարք շրջաններում, մասնավորապես Արցախում և կրում է «Անզուլիս տերտերը» վերնագիրը⁶: Կորած լուսինը, արևը փնտրող գյուղացիները տերտերին մտցնում են արջի որջը, արջը պոկում է տերտերի գլուխը, և երբ տերտերի մարմինը հանում են, զարմանում են, որ նա անգլուխ է: Գրեթե նույն սյուժեն է զարգանում կրոնափոխ համշենահայերի տարբերակում, միայն սրանք արջի համար են մարդուն մտցնում որջը և ապա մարմինը երբ հանում են՝ տեսնելով անգլուխ, տարակուսում են, թե մինչ այդ մարդը գլուխ ու-

⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Երևան, 1973, № 67, էջ 249-254, հ. VII, Երևան, 1979, № 84, էջ 230-236:

⁶ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, № 78, էջ 272:

նե՞ր, թե՞ չունենք: Երկու տարբերակում էլ համագյուղացիները վերադառնում են գյուղ՝ ճշտելու գլխի գոյության իրողությունը:

Չմտան գիշերը դրսում մերկ մնալու և հեռվից առկայծող լույսից տաքանալու սյուժեն (էջ 191) կենցաղավարում է նաև Արցախում⁷:

Որոշակի է նաև համշենահայերի երգային բանահյուսության ընդհանրություններ Հայաստանի ազգագրական շրջանի ժողովրդական քնարերգության հետ.

*Բարխին դագե խրնձոր(ի) ձառ,
Խրնձոր գուցքիմ այե դար,
Բսա բագարիս՞ խաթեր
Մեզալ բագար այե դար (էջ 246):*

*Մըեր տըռանը խնգի ծառ,
Վըեսկե կաքավ յրան թառ,
Էս գյիրագյի քրեզ մոհլաթ,
Էն գյիրագյի եկ ինձ տար՞:*

*Զենդիդը պարցը կյաղ ա,
Չուր հիվանդի տաղ ա,*

*Մեվդան սեվդային դալ չին,
Աս ինչբէս անդեր կյաղ ա (էջ 270):*

*Գանձասարը բարձր տեղ ա,
Ջուրը հիվանդի դեղ ա,
Միրածը սիրածեն չըն տամ,
Էս հինչ կորպաշտի գեղ ա¹⁰:*

Հայագիտական կարևոր նշանակություն ու արժեք ունի գրքի բարբառագիտական բաժինը: Նշենք, որ նյութի յուրացումը դյուրին դարձնելու նպատակով հեղինակը զուգահեռ տվել է նաև գրական թարգմանությունները: Բացի այդ, գիրքը օժտված է բառարանով՝ Խոփայի խոսվածք-գրական հայերեն և գրական հայերեն - Խոփայի խոսվածք (2000-ական բառ):

Անփոփելով մեր խոսքը՝ ասենք. Ս. Վարդանյանի սույն աշխատությունը յուրահատուկ ներդրում է հայագիտության ասպարեզում:

Ա.Լ.ՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

⁷ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, Երևան, 1971, էջ 378-380:

⁸ Բագար-կիրակի:

⁹ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, № 1470, էջ 237:

¹⁰ Գրի է առնված Ղարաբաղում XIX դարի վերջերին. տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, Խ. Դադյան, ֆ. 319, գ. 7: